նամակի մասին, որի մէջ յիշւում էր Վրաստանի անձեռնմխելիութիւնը եւ որ զօր. Դենիկինի զօրքերը չեն անցնի ներկայումս վրաց հանրապետութեան զօրքերի գրաւած սահմանները: Բացի այդ, ես հաւատացնում էի ձեզ առաջ, որ բոլոր միջոցները ձեռք կ'առնեմ, որ Դենիկինեան բանակը չանհանդստացնէ Վրաստանը, եւ այդ տեսակէտից զգում եմ վրաց կառավարութեան հանդէպ որոշ պարտաւորութիւններ:

«Ես շատ եմ վշտացած բոլոր պատահածով: Յարձակման սկսուելուց առաջ, ես Սոչի ուղարկեցի անգլիական մի սպայ, որպէսզի հետաքրքրէ այնտեղ պատահած բաները: Դրժբախտաբար ձիւնն ու բորանը խանգարեցին, որ յիշեալ սպան Սոչի հասնի, եւ այս պահուս նա Սուխում է գտնւում, բայց յոյս ունեմ, որ նա կը կատարէ իր վրայ դրուած պարտականութիւնը, եւ մինչեւ նրանից տեղեկութիւն չստանամ, դեռ ինձ առանձնապէս յանցաւոր չեմ համարի: Հեռագրական յարաբերութիւնների ընդհատման պատճառով ես չեմ կարող բոլոր հարցերին տալ սպառիչ պատասխան, եւ հէնց որ հնարաւորութիւն ստեղծուի լսելու երկու կողմերն էլ, ի վիճակի կը լինիմ լուծելու, թէ ով է իրական յանցաւորը:

«Չնայած այդ ամէնքի, փաստը մնում է փաստ. կամաւորական բանակը յարձակուել է եւ առաջ է շարժւում, եւ ես, հաւատարիմ իմ խոստումին՝ ձեռք եմ առել հետեւեալ միջոցները: Հէնց որ փոխադրութեան հնարաւորութիւն ստեղծուի, ես կ'ուղարկեմ անգլիական մի զօրամաս, որը ցամաք կ'ելնէ Սուխումում կամ Գագրիում, այնտեղից կը մեկնի դէպի ձեր սահմանը եւ տեղական միջնորդի դեր կը կատարէ: Անգլիական զօրամասը կը մնայ մատնանշուած տեղը, մինչեւ որ բոլոր հարցերը պարզուին: Ցուսամ, թէ դուք դէմ չէք այս բանին»:

Ժորտանիա.— «Ես իմ կարծիքս յետոյ կ'ասեմ, իսկ հիմա վճռականօրէն յայտարարում եմ, որ եթէ կամաւորական բանակը անմիջապէս չհեռանայ Գագրիի շրջանից, Վրաստանի կառավարութիւնը սեփական ուժերով կը ստիպէ նրան պարպել այդ շրջանը: Մենք կտրական կերպով պահանջում ենք, որ վրաց հանրապետութեան սահմանները անցնին հին Գագրիի մօտով, եւ եթէ նրանք յօժարակամ չենթարկուին վրաց կառավարութեան այս պահանջին, մենք նրանց կը քշենք: Վրաց կառավարութիւնը չի կարող հանդիստ լինել, մինչեւ որ կամաւորական բանակի զօրամասերը կը մնան վրաց հանրապետութեան ներսը»:

Զօր. Ուօկկեր.— «Ես ուզում եմ անգլիական զօրամաս ուղարկել ոչ թէ ստիպելու համար, որ այս կամ այն կողմը յետ քաշուի, այլ բաղխումը հարթելու նպատակով: Բայց եթէ Վրաստանի կառավարութիւնը այդ բանը չի ուզում, ես չեմ ուղարկի: Այդ դէպքում ես պարտաւոր եմ նախազգուշացնել, որ ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է ձեր վրայ»:

Ժորտանիա.— «Եթէ դենիկինեանները իրենք չհեռանան Գագրիի այն կողմը, անգլիական պահակները թող նեղութիւն չքաշեն այս կամ այն շրջանը գրաւելու, վրաց կառավարութիւնը սեփական ուժերով էլ կարող է ստիպել նրանց, որ հեռանան այժմուան գրաւած դրծից»:

Զօր. Ուօկկեր.— «Ես իրաւունք չունեմ ստիպելու Դենիկինին, որ այս կամ այն կողմը քաշուի. այդ ամբողջապէս կախուած է Պոլսի հրամանատարութիւնից: Իսկ զօրամասի առաքումը Գագրիի շրջանը ես նկատում էի իբրեւ նախազգուշական միջոց»:

Ժորտանիա.— «Մենք չգիտենք, թէ Դենիկինը որքան շուտ կը կատարէ Պոլսի հրամանատարութեան կարգադրութիւնը: Մենք կանգնած ենք մերկ փաստի առջեւ. կամաւորական բանակը մէկ անգամ արդէն չի կատարել անգլիական բարձր հրամանատարութեան պահանջը: Ի՞նչ երաշխիք, որ Դենիկինեաններն այժմ շուտ կը կատարեն ձեր կարգադրութիւնն այս դէպքում»:

Զօր. Ուօկկեր.— «Դուք ենթադրում էք, որ Դենիկինեանները կարող են շարունակել առաջ շարժուել հակառակ անգլիական պահակների ներկայութեան յիշեալ շրջանո՞ւմ»:

Ժորտանիա.— «Զօրավարը, ըստ երեւոյթին, չի ճանաչում ռուսներին, իսկ մենք նրանց շատ լաւ ենք ուսումնասիրել: Անկարող շարժուելու դէպի հիւսիս՝ կամաւորական բա-